ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/06

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «Դեղորայքի» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 13.01.2022թ. ներկայացված (14.01.2022թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/06 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 13.01.2022թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

««Նատալի ֆարմ» ՍՊԸ-ը ս/թ սեպտեմբերի 29-ին մասնակցել է «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/5 ծածկագրով բաց մրցույթի բոլոր չափաբաժիններով:

Ընթացակարգի հրավերով ըստ չափաբաժինների նախատեսված է եղել հետևյալ քանակով ապրանքները.

1. չափաբաժին 50 հատ

2.չափաբաժին 400 հատ

3.չափաբաժին 20 հատ

4.չափաբաժին 20 հատ

5. չափաբաժին 15, 000 հատ

6.չափաբաժին 15, 000 հատ

7.չափաբաժին 10, 000 հատ

8.չափաբաժին 15, 000 հատ

Ընթացակարգի հրավերը կցվում է.

Ս/թ սեպտեմբերի 30-ին կայացել է հայտերի բացման նիստը, որից հետո Ընկերությունը տեսնելով գնման առարկայի անհասկանալի բարձր նախահաշվային գները հարցում է կատարել Պատվիրատուին:

Պատվիրատուի կողմից ստացվել է պատասխան առ այն, որ գները հաշվարկված են 5-8 չափաբաժինների մասով 15000, 15000, 10000, 15000. քանակների համար և կցվել է քաղվածք PPCM համակարգից:

Այնուհետ, մեր ընկերությունը գրություն է ներկայացրել Պատվիրատուին (գնահատող հանձնաժողովին), հստակ մատնանշելով այն փաստը, որ հրավերում նախատեսված քանակները տարբերվում են և ընկերությունը գնային առաջարկ ներկայացրել է Հրավերին համապատասխան: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերությանը ճանաչել է հաղթող՝ հաշվի չառնելով Ընկերության փաստարկները և գրությունը: Գրությունները կցվում են:

Հնարավոր մասնակիցները չունեն հնարավորություն, որպեսզի տեսնեն Պատվիրատուի կողմից PPCM համակարգում կատարվող գործողությունները, և պարտավոր էլ չեն: Մասնակիցները առաջնորդվում են Հրավերով, հետևաբար Ընկերությանը չի կարելի ստիպել հաղթելու պայմաններում մատակարարել ընդհանուր գնային առաջարկի սահմաններում, բայց ուրիշ քանակի ապրանք:

Այն, որ ստորակետը առանձնացնում է թվի ամբողջ մասը ոչ ամբողջական մասից, հանդիսանում է մաթեմատիկայի անխախտ կանոն և ընդունված է ամբողջ աշխարհում: Այսինքն 15,000-ը դա տասնհինգ ամբողջ զրո հազարերորդականն է, այլ ոչ թէ տասնհինգ հազարը: Դա են ապացուցում նաև բազմաթիվ այլ կնքված պայմանագրերը (կցվում է մեկ օրինակ):

Գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը կայացրել է սխալ որոշում և խախտել է Ընկերության իրավունքները, ինչպես նաև ՀՀ գնումների մասին Օրենսդրության պահանջները:

Բացման նիստի և գնահատման նիստի արձանագրությունները, հաղթողի որոշումը կցվում է:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 2-րդ հոդվածով սահմանված են Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, որտեղ 8-րդ ենթակետով նախատեսված է հետևյալը.

7) հրավեր՝ պայմանագիր կնքելու նպատակով մասնակցին առաջարկվող պայմաններ.

8) հայտ՝ հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկ.

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է հետևյալը. «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հետևյալը.

«Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում»:

Փաստացի «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է հրավերով նախատեսված քանակների համար, մասնավորապես. 5 չափաբաժին՝ 15 հատ, 6 չափաբաժին՝ 15 հատ, 7 չափաբաժին՝ 10 հատ, 8 չափաբաժին՝ 15 հատ և հրավերում ներառված թվերի ստորակետները ընկալվում են հստակ, որպես ամբողջական թվի տարանջատում ոչ ամբողջականից, բոլոր փաստաթղթերը կազմված են եղել հրավերի պահանջներին համապատասխան, հետևաբար Ընկերությունը հաղթող պետք է ճանաչվի հրավերով նախատեսված գնման առարկայի համար՝ առանց փոփոխելու սահմանված քանակները:

Գնահատող հանձնաժողովը ընկերությանը հաղթող է ճանաչել հրավերով նախատեսված քանակներից տարբեր քանակի ապրանքների համար, ինչը հակասում է Օրենսդրությանը:

Բողոքի պահանջը.

Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին Ընկերությանը հաղթող ճանաչել ըստ չափաբաժինների՝ 5 չափաբաժին 15 հատ, 6 չափաբաժին 15 հատ, 7 չափաբաժին 10 հատ, 8 չափաբաժին 15 հատ քանակների համար, իսկ դրա տեխնիկապես անհնարինության պայմաններում Ընթացակարգը նշված չափաբաժիններով հայտարարել չկայացած»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 20.01.2022թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>«Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 17.01.2022թ. N 37 գրությամբ հայտնել է, որ ներկայացնում է «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի բոլոր փաստաթղթերը:

«Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից գրավոր դիրքորոշում բողոքի վերաբերյալ չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 20.01.2022թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2022/06 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2022/06 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «Դեղորայքի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել են դեղերի քանակները:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.01.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Ընթացակարգի 3, 5, 6, 7 և 8-րդ չափաբաժինների մասով «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

4. «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, հայտնելով, որ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է հրավերով նախատեսված քանակների համար, մասնավորապես՝ 5-րդ չափաբաժին՝ 15 հատ, 6-րդ չափաբաժին՝ 15 հատ, 7-րդ չափաբաժին՝ 10 հատ, 8-րդ չափաբաժին՝ 15 հատ, մինչդեռ՝ հաղթող է ճանաչվել հրավերով նախատեսված քանակներից տարբեր քանակի ապրանքների համար, ինչը հակասում է օրենսդրությանը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի 13.01.2022թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի 17.01.2022թ. N 37 գրությամբ ներկայացված փաստաթղթերը և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:

Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Այսպես, «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «Դեղորայքի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.01.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Ընթացակարգի 3, 5, 6, 7 և 8-րդ չափաբաժինների մասով «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Այսպիսով՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, հայտնելով, որ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է հրավերով նախատեսված քանակների համար, մասնավորապես՝ 5-րդ չափաբաժին՝ 15 հատ, 6-րդ չափաբաժին՝ 15 հատ, 7-րդ չափաբաժին՝ 10 հատ, 8-րդ չափաբաժին՝ 15 հատ, մինչդեռ՝ հաղթող է ճանաչվել

հրավերով նախատեսված քանակներից տարբեր քանակի ապրանքների համար, ինչը հակասում է օրենսդրությանը:

Միևնույն ժամանակ Ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո Ընկերությունը՝ տեսնելով գնման առարկայի անհասկանալի բարձր նախահաշվային գները, հարցում է կատարել Պատվիրատուին, որին ի պատասխան՝ վերջինիս հայտնել է, որ գները հաշվարկված են 5-8 չափաբաժինների մասով 15000, 15000, 10000, 15000 հատ քանակների համար, մինչդեռ՝ «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ն գտնում է, որ 15,000-ը դա տասնհինգ ամբողջ զրո հազարերորդականն է, այլ ոչ թէ տասնհինգ հազարը, այն փաստը, որ ստորակետը առանձնացնում է թվի ամբողջ մասը ոչ ամբողջական մասից, հանդիսանում է մաթեմատիկայի անխախտ կանոն և ընդունված է ամբողջ աշխարհում:

Այս մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով (հետայսու՝ Հավելված), ձեռքբերման ենթակա ապրանքների քանակները սահմանվել են հետևյալ ձևով՝

Հրավերով նախատեսված չ/ h	**Անվանումը**	**Չափման միավորը**	**Ընդհանուր քանակը**
1	կատվախոտի հանուկ	հատ	**50**
2	Դոմպերիդոն	հատ	**400**
3	արգինին (արգինինի հիդրոքլորիդ)	հատ	**20**
4	բենզիլդիմեթիլ (3-(միրիստոիլամինո) պրոպիլ) ամոնիում քլորիդ մոնոհիդրատ	հատ	**20**
5	Ֆենիբուտ	հատ	**15,000**
6	Արիպիպրազոլ	հատ	**15,000**
7	Արիպիպրազոլ	հատ	**10,000**
8	էսցիտալոպրամ (էսցիտալոպրամի օքսալատ)	հատ	**15,000**

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ բողոքաբերի պնդումները հիմնավոր չեն, և բողոքը ենթակա է մերժման: Մասնավորապես, ինչպես հայտնել է բողոքաբերը, Պատվիրատուն Հավելվածում ապրանքի 15,000 հատ քանակը նշել է ստորակետով, ինչն էլ Ընկերության մոտ ձևավորել է համոզմունք, որ խոսքը վերաբերում է ոչ թե 15000 հատին (տասնհինգ հազար), այլ 15 հատին, քանի որ ստորակետն առանձնացնում է թվի ամբողջ մասը ոչ ամբողջական մասից, մինչդեռ այս առումով հարկ եմ համարում ընդգծել, որ նույն Հավելվածում մի դեպքում (1-4-րդ չափաբաժիններում) ապրանքների քանակները նշվել են 50, 400, 20, 20 առանց ստորակետից հետո զրոներ նշելու, իսկ մյուս դեպքում՝ (5-8-րդ չափաբաժիններում) 15,000, 15,000, 10,000, 15,000, ինչն էլ հիմք է փաստելու, որ եթե պատվիրատուի կողմից Հավելվածում ստորակետը թվի ամբողջ մասը ոչ ամբողջական մասից առանձնացնելու նպատակով դրված լիներ, ապա 1-4-րդ չափաբաժիններով ներկայացված քանակները կգրվեին նույնկերպ, ինչպես 4-8-րդ չափաբաժիններում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից կողմից 13.01.2022թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**